

**ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԵՎԱՏՏԱՅԱՅՈՒՅԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՍՏԵՔՍՏՈՒՄ**

1863 թվականին մարտի 17-ին սուլթանի հրամանով հաստատված և գործադրված Ազգային սահմանադրությունը պատմական, հասարակական-բաղադրական և իրավական առումով ուշագրավ երևույթ էր արևմտահայության կյանքում: Եվրոպական արժեքների ներմուծումը հեղաշրջող դերակատարություն ունեցավ հայ մարդու ինքնագիտակցության վրա: Հայ սահմանադրականների հմուտ գործունեության շնորհիվ արևմտյան արժեքները լրացվել են ազգային մտածելակերպին, խառնվածքին, մշակութային պատկերացումներին, ազգային սովորույթներին ու ավանդույթներին համապատասխան բովանդակությամբ:

Ազգային սահմանադրությամբ օրենսդիր իշխանություն հանդիսացող Ազգային երեսփոխանական ժողովն իր օրենքներով հստակեցրեց ազգային գործերի հիմնական և ընդհանուր ուղղությունները: Այն հայության գիտակցության մեջ ներդրեց ազգային կյանքի խնդիրներով հետաքրքրվելու և զբաղվելու անհրաժեշտությունը, ինչը հզոր խթան հանդիսացավ ազգային ոգու հզորացման համար՝ հետագայում նպաստելով հայության հավաքականության ձևավորմանը: Սակայն Ազգային սահմանադրության գործառնության հենց սկզբից ի հայտ եկան բազմաթիվ կանոնակարգային խնդիրներ Ազգային ժողովի միստերի հրավիրման, անցկացման, առաջադրվող հարցերի քննարկման և այլն: Դրանով էր պայմանավորված Նահապետ Ռուսինյանի կողմից Ազգային ժողովի ներքին կանոնադրության մշակումը, որն ընդունվեց 1874 թվականի հոկտեմբերի 4-ի միստում [1]: Այն իրականում իրենից ներկայացնում էր ֆրանսիական խորհրդարանի ներքին կանոնադրության խմբագրված և տեղայնացված տարբերակը [2]: Այս մասին Հրանտ Ասատուրն իրավագիտորեն գրում է. «Ռուսինեան մեր Ազգ. ժողովը շփոթեր էր եւրոպական խորհրդարանի մը հետ... Ռուսինեանի յանցանքն էր չափազանց կապուիլ եւրոպական ըմբռնումներու, և օտար փորձառութեանց արդիւնքին» [3]: Այդուհանդերձ պետք է նշել, որ Ազգային ժողովի ներքին կանոնադրությունը, որոշակի հստակություն էր մտցնում միստերի հրավիրման, անցկացման, քվեարկության գործընթացում: Սակայն Ն.Ռուսինյանի օրենսդրական գործունեության հիմնական խոցելի կողմերից մեկն էր այն, որ նա հաշվի չէր առնում այն միջավայրը, որում

գտնվում էր արևմտահայությունը, ինչի արդյունքում միշտ «գործնականը գոհաբերում էր տեսականին»:

Ազգային ժողովի ներքին կանոնագիրը բաղկացած էր 112 հոդվածներից, որում ամրագրվում էին Ազգային ժողովի նիստերի անցկացման գործառնությունները, վարչության ճյուղերի ձևավորման կարգը, հստակեցվում էր հասարակայնության և Բ.Պան հետ հարաբերությունները: Սակայն կանոնադրությունը պարունակում էր ոչ միայն հակասական, այլև հակասահմանադրական հոդվածներ: Օրինակ, անհամապատասխանություն կար սահմանադրության 61-րդ և կանոնադրության 1-ին հոդվածների միջև: Կանոնադրության առաջին հոդվածը նախատեսում էր Ազգային ժողովի նիստերը բացել մայիսի սկզբին և ավարտել մարտի վերջին, մինչդեռ սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովը գումարվում էր երկու տարին մեկ անգամ՝ երկու ամսով: Նմանատիպ անհամապատասխանությունները կանոնադրության մեջ բազմաթիվ էին:

Ազգային ժողովի կողմից վերանայվում են նաև Կենտրոնական վարչության կազմակերպման սկզբունքները: Այդ ծրագիրը («Ծրագիր վարչական կազմակերպության») քննության է առնվում 1880 թվականի ապրիլի 25-ի նիստում: Ատենապետների դիվանի բարեփոխված ծրագիրը բաղկացած էր երեք գլուխներից և 45 հոդվածներից [4]: Այստեղ առաջարկվում էին վարչության անդամների ընտրության նոր սկզբունքներ: Եթե նախկինում վարչության անդամներին ընտրում էր Ազգային ժողովը, ապա նոր ծրագրով այն վերապահվելու էր պատրիարքին:

Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվում նաև «Դատավարության կանոնների ծրագիրը» [5], որը, սակայն, այդպես էլ չի մտնում Ազգային ժողովի օրակարգ:

Նշված բոլոր ծրագրերն այդպես էլ մնացին թղթի վրա և Ազգային ժողովը վերածեցին դատարկ խոսարանի՝ այդ ժողովի գոյությունն ինչ-որ կերպ հիմնավորելու համար: Միաժամանակ ակնհայտ է, Ազգային ժողովի երեսփոխաններից ոչ բոլորն էին, որ անտարբեր վերաբերմունք ունեին ազգային խնդիրների նկատմամբ: Ազգային ժողովը գործնական և ձկուն դարձնելու համար կազմվում էին նախագծեր և ծրագրեր, որոնք ինչքան էլ ցավալի էր, նույնիսկ չէին մտնում Ազգային ժողովի օրակարգ, կամ էլ քննարկումը հետաձգվում էր անորոշ ժամանակով: Կարծում ենք, որ այս կարևոր կառույցի ոչ լիարժեք կայացմանը խոչընդոտ էին հանդիսանում ոչ միայն թուրքական իշխանությունները, այլև արևմտահայ «ազգային ջոջերը»: 1880-ական թվականներին Ազգային ժողովի ընդհատումներով գումարվող և հաճախ սնամեջ նիստերը ցույց էին տալիս Ալի փաշայի կողմից ժամանակին արված թունոտ դիտողության իրակա-

նացումը, այն, որ սահմանադրությունը քառակուսի անիվներով սայլ է՝ անկարող առաջ շարժվելու: Օսմանիզմի ջատագովների հարուցած խոչընդոտները, և հատկապես Աբդուլ Չամիդի քաղաքական խարդավանքները պառլամենտարիզմի դեմ ամլության էին դատապարտում Ազգային ժողովը: Օսմանյան պետությունն ամբողջովին տնօրինում և ուղղորդում էր Ազգային ժողովի գործունեությունը, իսկ այդ ժողովի հավակնությունները ժողովրդավարական ծավալներ տալու քննարկված հարցերին, ի վերջո վերածվում էին առարկայազուրկ մտքերի փոխանակության: Ազգային ժողովի գործունեությունը մնում էր հիմնականում բարոյականության, և ոչ թե քաղաքացիական նորմերի սահմաններում, այն չէր ամրապնդվում նյութական որևէ հենարանով, որի վկայությունը տասնամյակներ տևած տուրքի հարցի չարչրկումն էր, որն այդպես էլ անլուծելի մնաց:

Ազգային սահմանադրության 90-րդ հոդվածի համաձայն «վաստակի ու շահու տեր» յուրաքանչյուր չափահաս անհատ պարտավոր էր տարեկան տուրք վճարել «ազգային ծախուց» մասնակցելու համար [6]: Տուրքը գանձվում էր տարին մեկ անգամ, որի չափը պայմանավորված էր յուրաքանչյուր անհատի ունեցվածքով: Բացի այդ, սահմանադրությամբ ակտիվ ընտրական իրավունք էր վերապահում 25 տարին լրացած, օսմանահպատակ և տարեկան 75 դրշ ազգային տուրք վճարող անձանց: 1863 թվականին, առաջին ազգային երեսփոխանական ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր թաղի բնակչից առանձնացվում են 75 դրշ և ավելի տուրք վճարողները, որոնք էլ իրականացնելով սահմանադրությամբ նախատեսված ակտիվ ընտրական իրավունքը, մասնակցում են Ազգային ժողովի ընթացիկ ընտրություններին: Սակայն թաղական խորհուրդների անհետևողականության հետևանքով գործընթացը մնում է անավարտ: Շատ հաճախ թաղում 75 դրշ. տուրք վճարելու հնարավորություն ունենում էին շատ քչերը, ինչի արդյունքում, երեսփոխան էին ընտրվում նույնիսկ 12 քվեով: Բացի այդ, գույքային ցենզի առկայությունը ընտրական իրավունքում գրեթե անհնար էր դարձնում գավառահայության մասնակցությունը: Տուրք վճարելու նրանց անկարողությունն անելանելի դրության մեջ էր դնում ազգային մարմինների գործունեությունը, ինչի մասին են վկայում Ազգային ժողովի ատենագրությունները և Քաղաքական ժողովի տեղեկագրերը: Ազգային վարչության ծախսերը փակելու համար հաճախ պատրիարքները ստիպված են եղել դիմել հայ մեծահարուստներին [7]:

Ազգային ժողովի կողմից նորմատիվ-իրավական կարգավորման ենթարկվեց նաև Ազգային սահմանադրությունը, որի վերաքննության անհրաժեշտությունն առաջացավ սկսած այն պահից, երբ այն մտավ գործադրության մեջ:

Սահմանադրության վերաքննության անհրաժեշտությունը բխում էր, նախ և առաջ հետևյալ պատճառներից.

1. Ազգային ժողովն իր զանազան հանձնաժողովներով և խորհուրդներով վերածվել էր դանդաղաշարժ, բարդ, անգործունակ մի կառույցի, որը կարիք ուներ արդիականացման:

2. Պատճառաբանելով գավառական 40 երեսփոխանների ընտրությունների ձգձգումը, Ազգային ժողովում սահմանադրությամբ նախատեսված 71 երեսփոխանների ներկայությամբ որոշումներ ընդունելու փոխարեն, 51 ներկաներով օրինական նիստեր հրավիրելու հակասահմանադրական որոշում էր կայացվել:

3. Քաղաքական ժողովի անդամներ էին ընտրվում տարբեր գաղափարա-քաղաքական ուղղվածություն ունեցող անձինք, ինչը անհնարին էր դարձնում միասնական որոշումներ ընդունելու հնարավորությունը: Դրա հետևանքով անընդհատ հրաժարականներ էին ներկայացվում և Ազգային ժողովը հիմնականում զբաղվում էր հրաժարվածների փոխարեն նորերին ընտրելով:

Ազգային սահմանադրության վերաքննության խնդիրը թեև անընդհատ դրվում էր Ազգային ժողովի նիստերի օրակարգում, սակայն այլ հարցերի քննարկման պատճառով անընդհատ հետաձգվում էր: Սահմանադրության վերաքննության ողջ ընթացքը ցույց տվեց, որ աշխատանքի այդ եղանակը դատապարտված էր անհաջողության: Դրանում կարելի է համոզվել Ազգային ժողովի ատենագրություններն ուսումնասիրելով: Իհարկե, այստեղ պետք է կարևորել նաև այն իրողությունը, որ սահմանադրության վերաքննությանը դեմ էին պոլսեցի էֆենդիները, որոնք չէին ցանկանում գավառահայությանը ներգրավել Ազգային ժողովում: Սահմանադրության բարեփոխմանը դեմ էր նաև Ազգային ժողովի ատենապետ Ստեփան Ասլանյանը, որի մասին մեծ երգիծաբան Յ.Պարոնյանը գրում էր. «Ստեմ եկավ, որ հայտնեց, թե Սահմանադրության վերաքննությունը ազգային շահերուն հակառակ էր»[8]: Պարզ էր, որ եթե ժողովի ատենապետը դեմ էր սահմանադրության քննարկմանը, ապա նա իր ողջ ջանքերը պետք է ներդնէր այն խափանելու համար: Ինչպես իրավագիտորեն նկատում է Ազգային ժողովի ատենապետ Ստեփան Ասլանյանը. «սա այն երեւելի խնդիրն է որ մէկ քանի ժողով եւ մէկ քանի Պատրիարք հինցուց, եւ ինքը տակաւին չը վերջացաւ» [9]:

Սահմանադրության վերաքննության բազմաթիվ առաջարկություններն ու վիճաբանությունները ոչ մի դրական արդյունքի չեն հանգեցնում և ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Ազգային ժողովը որոշում է սահմանադրությունն իբրև «նվիրական օրենք» թողնել անփոփոխ, իսկ

անգործադրելի և գործնականում դժվարություններ առաջացնող սկզբունքները բարեփոխել կանոնադրության միջոցով:

Ինչպես տխրահռչակ «տրոց խնդիրը», սահմանադրության վերաքննության խնդիրը ևս անլուծելի մնաց՝ հիմնականում մանրաթեմայության, կանոնական նորմերի գերազնահատման և գործնականում ոչ կիրառելի իր պատկերացումներին իրավական ձևակերպումներ տալու անպտուղ վարքագծի պատճառով:

Ազգային սահմանադրությունը մեծ դերակատարություն ունեցավ արևմտահայ դպրոցների բարեշրջման գործընթացում, քանի որ 45-րդ հոդվածի համաձայն Ուսումնական խորհուրդը զբաղվելու էր դաստիարակության և կրթության ընդհանուր տեսչությամբ: Սույն սահմանադրական սկզբունքի համաձայն էլ, Ազգային ժողովի կողմից նշանակված Ուսումնական խորհուրդը ձեռնամուխ է լինում դպրոցներում կրթության արդիական մեթոդներ և ծրագրեր ներդնելու գործընթացին: 1864 թվականին ընդունված ազգային վարժարանների բարեկարգության ընդհանուր կանոնադրությունը [10] գրված էր ժամանակի պահանջներին և արևմտահայության ազգային-կրթական շահերին համապատասխան: Սակայն այն գործնականում կիրառվել է Կ.Պոլսում, Ձմյուռնիայում և մի քանի այլ խոշոր քաղաքներում, որտեղ դպրոցներն ունեին որոշ նյութական միջոցներ և ուսուցչական կադրեր: Այլ էր դրությունը Արևմտյան Հայաստանի հեռավոր գավառներում, որտեղ թուրքական իշխանությունների կողմից ճնշված ու հալածված հայությունը, չունենալով ֆինանսական միջոցներ, չէր էլ կարող անգամ երազել կրթություն ստանալու մասին:

Անհեռևանք մնացին նաև Գավառական հարստահարությունների մասին՝ Ազգային ժողովի կողմից ընդունված տեղեկագրերը:

Առաջին անգամ հարստահարությունների մասին հանդիպում ենք 1865 թվականին կազմված «Տեղեկագիր Քաղաքական ժողովոյ Կեդրոնական Վարչութեան առ Ազգային Ընդհանուր ժողով» փաստագրի մեջ, որտեղ նշվում էին բազում բողոքներ քրդական ավազանու և թուրքական բյուրոկրատիայի կողմից տուրքերի ծանրացման, կատարվող ապօրինությունների և կամայականությունների մասին: Սակայն արևմտահայության հարստահարությունների հարցը որոշակիորեն դրվում է Ազգային ժողովի օրակարգում միայն Մ.Խրիմյանի պատրիարքության շրջանում:

1871 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունված գավառական հարստահարությունների տեղեկագրում մեկ առ մեկ թվարկվում էին յուրաքանչյուր վիլայեթի առաջնորդական վիճակների համար ուղարկված բողոքագրերը (թագրիդները), որոնց թիվը հասնում էր 529-ի [11]: Դրանք դասավորված էին ըստ հարստահարությունների տեսակների արքունական տուրքերի ապօրինի գան-

ծում, կառավարության պաշտոնյաների զեղծումներ, կանանց և երեխաների բռնի սահմեղականացում, կաթոլիկների և բողոքականների պատճառով հալածանքներ լուսավորչական հայերի նկատմամբ, մասնավոր հարստահարություններ, եկեղեցիների կառուցման, կոչնակահարության արգելում, գերեզմանների պղծում, հուղարկավորության և այլ կրոնական ծեսերի արգելում:

Հետագայում գավառական հարստահարություններին վերաբերող մեծաքանակ նյութերն օգտագործվեցին Ներսես Վարժապետյան պատրիարքի կողմից 1876 թվականին նոր տեղեկագիր կազմելու ժամանակ [12], ինչը վկայում էր այն մասին, որ հինգ տարի հետո էլ հարստահարությունները գավառներում չէին դադարել: Երկու տեղեկագրերն էլ, որոնք հանձնվել էին թուրքական իշխանություններին, իրականում ոչ մի գործնական նշանակություն չունեցան: Սակայն դրանք պատմական մեծ արժեք են ներկայացնում, առաջին հերթին նրանով, որ պատրիարքարանի կողմից մինչ այդ գավառահայության հարստահարությունների մասին պետությանը ներկայացրած «թագիրի»-ներից տարբերվում էին իրենց ընդհանրականությամբ: Մյուս կողմից՝ այդ հուշագրերի պատրաստությամբ գավառահայության վիճակի բարելավման հարցը հայտնվում է հայ հանրային կյանքի հոլովություն:

Այսպիսով, Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների գործնական կիրառության անհնարինությունը պայմանավորված էր ժամանակի քաղաքական այն իրավիճակով, որը տիրում էր Օսմանյան կայսրությունում XIX դարի երկրորդ կեսին: Չմոռանանք նաև այն հանգամանքը, որ Ազգային սահմանադրությունը վավերացվել էր իբրև հպատակ ժողովրդին շնորհված սահմանադրություն և Օսմանյան կայսրության մեջ չէր կարող ունենալ իրավական բարձրագույն ուժ:

Գրականություն

1. Տես Կանոնադրութիւն Ազգային ժողովին, Կ.Պոլիս, 1874:
2. Տես «Հայրենիք», Կ.Պոլիս, 1874, թիվ 222:
3. Սաստուր Հ., Դիմաստներներ, Կ.Պոլիս, 1921, էջ 68:
4. Տես Ատենագրութիւն Ազգային ժողովոյ (1880-1881 թթ.), Կ.Պոլիս, 1880, էջ 493-495:
5. Տես Օրինական հրահանգ ազգային դատարանաց հայոց թուրքիոյ, արակ Ա., Կ.Պոլիս, 1881:
6. Տես Ազգային սահմանադրութիւն հայոց, Կ.Պոլիս, 1863, էջ 51:
7. Տես Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ.Ա, Թիֆլիս, 1912, էջ 74:
8. Հ.Պարոնյան, Երկեր, հ. 2, Երևան, 1964, էջ 213:
9. Ատենագրութիւն Ազգային ժողովոյ (1876-1877 թթ.), Կ.Պոլիս, 1876, էջ 53:
10. Տես Կանոնադրութիւն ընդհանուր բարեկարգութեան ազգային վարժարանաց, Կ.Պոլիս, 1864:
11. Տես Ատենագրութիւն Ազգային ժողովոյ (1870-1874 թթ.), Կ.Պոլիս, 1870, էջ 475-476:
12. Տես Ատենագրութիւն Ազգային ժողովոյ (1876-1877 թթ.), Կ.Պոլիս, 1876, էջ 203-238: